ՀԱԱՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/55-1

ք. Երևան

24-ը մայիսի 2021թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ-ը ի դեմս ռեկտոր՝ Վ. Ուռուտյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» ԱՁ-ն, ի դեմս տնօրեն՝ Դ. Հովհաննիսյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 6327000 /վեց միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են

ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով նահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	«Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» ԱՁ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	Գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 56-46
«Արդշինբանկ» ՓԲԸ	«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247010053103	Հ/Հ՝ 11813012607100
ՀՎՀՀ՝ 01507028	ՀՎՀՀ՝ 20179887
Ռեկտոր՝ ----------Վ. Ուռուտյան	Տնօրեն՝ ---------- Դ. Հովհաննիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի								Մատակարարման*		
	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Միավոր գինը (ՀՀդրամ)	Ընդհանուր քանակը	Գումար (ՀՀ դրամ)	Հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
1	24451200	Բորդոյան խառնուրդ	AGAFERT	Ազդեցության լայն շրջանակ ունեցող բարձր արդյունավետ սնկասպան խաղողի վազի և պտղատու այգիներում, սնկային ու բակտերիալ հիվանդությունների դեմ պայքարելու համար:Գերազանց կպչողական հատկությամբ: Ազդող նյութը՝ 200գր/կգ աղնձի սուլֆատ + կալցիումի հիդրօքսիդ: Փաթեթավորում՝ 10կգ պարկերով: Պատրաստուկային ձևը՝ ջրում լուծվող փոշի:	կգ	2600	120	312000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	120	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
2	24451120	Հերբիցիդ 2	IQS	Կոմբինացված ներբույսային հետձլային ազդեցության մոլախոտասպան է՝ հացահատիկային մշակաբույսերի և եգիպտացորենի ցանքատարածությունները դժվար ոչնչացող միամյա և բազմամյա մոլախոտերից պաշտպանելու համար: Ազդող նյութը՝ 344 գ/լ 2.4-Դ թթու + 120 գ/լ դիկամբա: Փաթեթավորում՝ 10լ պոլիէթիլենային տարայով: Պատրաստուկային ձևը՝ ջրային լուծույթ:	լիտր	13000	20	260000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
3	24451200	Ֆունգիցիդ 1	HARO	Անօրգանական կոնտակտ սնկասպան-ակարիցիդ՝ խաղողի վազի, պտղատուների, բանջարանոցային և ծաղկային մշակաբույսերի իսկական ալրացող և այլ տարածված հիվանդությունների դեմ պայքարելու համար: Ջրում հեշտ լուծվող: Ազդող նյութը՝ 800գր/կգ ծծումբ: Փաթեթավորում՝ 20կգ պարկերով: Պատրաստուկային ձևը՝ ջրադիսպերսիոն հատիկներով:	կգ	2500	100	250000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	100	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
4	24451200	Ֆունգիցիդ 3	HARO	Բարձր արդյունավետության ներբույսային ազդեցության սնկասպան է, նախատեսված պտղատու այգիների քոս, ալրացող, բանջարանոցային մշակաբույսերի՝ ալտերնարիոզ, ալրացող և այլ հիվանդությունների դեմ պայքարում: Ազդող նյութը՝ 250գր/լ դիֆենոկոնազոլ: Փաթեթավորում՝ 250գր պոլիէթիլենային տարայով: Պատրաստուկային ձևը՝ խտացված էմուլսիա:	կգ	73000	10	730000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
5	24451200	Ֆունգիցիդ 4	HARO	Ներբույսային ազդեցության սնկասպան է՝	կգ	73000	2	146000		2	Պայմանագիրն ուժի մեջ

				հունդավոր պտուղների քոս, մոնիլիոզ ալտերնարիոզ հիվանդությունների, կորիզավոր պտուղների՝ մոնիլիոզ և խաղողի վազի մոխրագույն հիվանդության դեմ պայքարում: Ազդող նյութը՝ 750գր/կգ ցիպրոդինիլ: Փաթեթավորումը՝ 1կգ փաթեթով: Պատրաստուկային ձևը՝ ջրադիսպերսիոն հատիկներ:					ՀՀ, ք. Երևան, Տերյան 74		մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
6	33691147	Ֆունգիցիդ՝ 5	HARO	Բարձր արդյունավետության կոմբինացված ներբույսային և կոնտակտ ազդեցության սնկասպան, խաղողի վազի,լոլիկի և վարունգի (բաց ու փակ գրունտի), կարտոֆիլի հիվանդությունների դեմ պայքարում: Ազդող նյութը՝ 93. 5գր/լ ազոքսիստրոբին+ 500գր/լ ֆոլպետ: Փաթեթավորում՝ 5լ պոլիէթիլենային տարա: Պատրաստուկային ձևը՝ խտացված կախույթ:	լիտր	18000	35	630000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	35	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
7	24451200	Ֆունգիցիդ՝ 6	HARO	Կոմբինացված ներբույսային ու կոնտակտ ազդեցության սնկասպան, պաշտպանում է կարտոֆիլը, խաղողը, բանջարանոցային մշակաբույսերը ֆիտոֆտորոզից և այլ կեղծ ալրացողային հիվանդությունների հարուցիչներից: Ազդող նյութը՝ 640գր/կգ մանկոցեբ + 40գր/կգ մետալաքսիլ Մ: Փաթեթավորում՝ 1կգ և 5 կգ փաթեթով: Պատրաստուկային ձևը՝ ջրադիսպերսիոն հատիկներ:	կգ	13000	30	390000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
8	24451200	Ֆունգիցիդ՝ 7	HARO	Արդյունավետ կոնտակտ սնկասպան է նախատեսված կարտոֆիլն ու լոլիկը ֆիտոֆտորոզից և ալտերնարիոզից, խաղողի վազը՝ միլդիուից պաշտպանելու համար: Ազդող նյութը՝ 800գր/կգ մանկոցեբ: Փաթեթավորում՝ 25կգ պարկերով: Պատրաստուկային ձևը՝ թրջվող փոշի:	կգ	7000	50	350000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	50	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
9	24451200	Ֆունգիցիդ՝ 8	HARO	Բարձր արդյունավետության կոմբինացված ներբույսային և կոնտակտ ազդեցության սնկասպան է, պաշտպանում է բանջարանոցային մշակաբույսերը և խաղողը մի շարք սնկային հիվանդություններից: Ազդող նյութը՝ 25գր/կգ մանդիպրոպամիդ + 245գր/կգ պղնձի օքսիքլորիդ: Փաթեթավորում՝ 5 կգ փաթեթով: Պատրաստուկային ձևը՝ ջրադիսպերսիոն հատիկներ:	կգ	11000	60	660000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	60	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
10	33691147	Ֆունգիցիդ՝ 9	HARO	Բարձ արդյունավետության կոմբինացված ներբույսային և կոնտակտ ազդեցության սնկասպան է, պաշտպանում է կարտոֆիլը, բանջարանոցային մշակաբույսերը, պտղատու այգիները և խաղողի վազը մի շարք սնկային հիվանդություններից: Ազդող նյութը՝ 250գր/լ մանդիպրոպամիդ + 250գր/լ դիֆենոկոնազոլ: Փաթեթավորում՝ 1լ պոլիէթիլենային տարայով: Պատրաստուկային ձևը՝ խտացված կախույթ:	լիտր	59000	8	472000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	8	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում

11	33691147	Ֆունգիցիդ 10	HARO	Ազդեցության լայն շրջանակ ունեցող, վառ արտահայտված պաշտպանական հատկություններով կոնտակտ սնկասպան է: Ազդող նյութը՝ 500 գր/լ քլորոտալոնիլ: Փաթեթավորում՝ 1լ պոլիէթիլենային տարայով: Պատրաստուկային ձևը՝ խտացված կախույթ:	լիտր	14000	8	112000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	8	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
12	33691147	Ֆունգիցիդ 11	HARO	Ներբույսային ազդեցության սնկասպան է՝ պտղատու այգիների ալրացող, քոս և այլ սնկային հիվանդությունների դեմ պայքարում: Ազդող նյութը՝ 250 գ/լ դիֆենոկոնազոլ + 250 գ/լ պրոպիկոնազոլ: Փաթեթավորում՝ 1լ պոլիէթիլենային տարայով: Պատրաստուկային ձևը՝ խտացված էմուլսիա:	լիտր	75000	1	75000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
13	24451111	Ինսեկտիցիդ 1	IQS	Սինթետիկ պիրետրոիդների խմբին պատկանող միջատասպան, որը բարձր արդյունավետությամբ կարելի է օգտագործել գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարում: Ազդող նյութը՝ 50գր/լ լյամդա-ցիհալոտրին: Փաթեթավորում՝ 1լ պոլիէթիլենային տարայով: Պատրաստուկային ձևը՝ միկրոկապսուլացված կախույթ:	լիտր	21000	13	273000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	13	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
14	24451111	Ինսեկտիցիդ 2	HARO	Կոմբինացված, ունիվերսալ, կոնտակտ, աղիքային ու ֆումիգացիոն ազդեցության միջատասպան-տզասպան է, նախատեսված պտղատու և խաղողի այգիներում, բանջարանոցային մշակաբույսերի կոմպլեքս վնասատուների դեմ պայքարում: Ազդող նյութը՝ 500գր/լ քլորպիրիֆոս + 50գր/լ ցիպերմետրին: Փաթեթավորում՝ 5լ պոլիէթիլենային տարա: Պատրաստուկային ձևը՝ խտացված էմուլսիա:	լիտր	15000	10	150000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
15	24451110	Ինսեկտիցիդ 3	HARO	Կոնտակտ-աղիքային ազդեցության, կենսաբանական ծագման միջատասպան է, պաշտպանում է խաղողի վազը, պտղատու ու բանջարանոցային մի շարք մշակաբույսերը վնասատուների դեմ պայքարում: Ազդող նյութը՝ 50գր/կգ էմամեկտին բենզոատ: Փաթեթավորում՝ 250գր պոլիէթիլենային տարայով: Պատրաստուկային ձևը՝ ջրալույծ հատիկներ:	կգ	102000	5	510000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
16	24451110	Ինսեկտիցիդ 4	HARO	Բարձր արդյունավետության կոմբինացված ներբույսային ու կոնտակտ ազդեցության միջատասպան է, պաշտպանում է գյուղատնտեսական մշակաբույսերը կրծող, ծծող կոմպլեքս վնասատուներից: Ազդող նյութը՝ 100գր/լ քլորանտրանիլիպրոլ + 50գր/լ լյամբդա-ցիհալոտրին: Փաթեթավորում՝ 500գր պոլիէթիլենային տարա: Պատրաստուկային ձևը՝ միկրոկապսուլացված կախույթ:	կգ	99000	5	495000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
17	24451111	Ինսեկտիցիդ 5	IQS	Բարձր արդյունավետության երկբաղադրամաս, կոմբինացված կոնտակտ-աղիքային ազդեցության միջատասպան է՝ պաշտպանում է պտղատու մշակաբույսերը	լիտր	22000	15	330000	ՀՀ, ք. Երևան,	15	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում

				պտղակերից և խաղողի վազը՝ ողկուզակերից:Ազդող նյութը՝ 30գր/լ լյուֆենուրոն + 75գր/լ ֆենօքսիկարբ: Փաթեթավորում՝ 1լ պոլիէթիլենային տարայով: Պատրաստուկային ձևը՝ խտացված էմուլսիա:					Տերյան 74		
18	24451111	Ինսեկտիցիդ 6	HARO	Բարձր արդյունավետության, կոնտակտ, աղիքային և ֆումիգացիոն ազդեցության միջատատզասպան է՝ կրծող, ծծող միջատների ու տզերի դեմ պայքարում: Ազդող նյութը՝ 570գր/լ մալաթիոն: Փաթեթավորում՝ 1լ պոլիէթիլենային տարայով: Պատրաստուկային ձևը՝ խտացված էմուլսիա:	լիտր	10000	4	40000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
19	24451111	Ինսեկտիցիդ 7	HARO	Կոնտակտ-աղիքային ազդեցության միջատատզասպան է, պաշտպանում է բանջարանոցային մշակաբույսերը, խնձորենին ու խաղողի վազը վնասատուներից: Ազդող նյութը՝ 100գր/լ բիֆենտրին: Փաթեթավորում՝ 5լ պոլիէթիլենային տարայով: Պատրաստուկային ձևը՝ խտացված էմուլսիա:	լիտր	23000	2	46000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
20	24451111	Ինսեկտիցիդ 8	HARO	Ներբույսային ազդեցության միջատասպան է: : Ազդող նյութը՝ 200 գր/լ իմիդակլոպրիդ: Փաթեթավորում՝ 250 գ պոլիէթիլենային տարայով: Պատրաստուկային ձևը՝ խտացված էմուլսիա:	լիտր	24000	4	96000	ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում

- **Մանրամասնություն.*** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը:

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247010053103
ՀՎՀՀ՝ 01507028
Ռեկտոր՝ _____ Վ. Ռուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» ԱՁ
Գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 56-46
«Այդի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11813012607100
ՀՎՀՀ՝ 20179887
Տնօրեն՝ _____ Դ. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Միավոր գինը (ՀՀ դրամ)	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.՝ ըստ ամիսների, այդ թվում*								
						V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Գումար (ՀՀ դրամ)
1.	24451200	Բորդոյան խառնուրդ	կգ	120	2600	312000	312000	312000	312000	312000	312000	312000	312000	312000
2.	24451120	Հերբիցիդ 2	լիտր	20	13000	260000	260000	260000	260000	260000	260000	260000	260000	260000
3.	24451200	Ֆունգիցիդ 1	կգ	100	2500	250000	250000	250000	250000	250000	250000	250000	250000	250000
4.	24451200	Ֆունգիցիդ 3	կգ	10	73000	730000	730000	730000	730000	730000	730000	730000	730000	730000
5.	24451200	Ֆունգիցիդ 4	կգ	2	73000	146000	146000	146000	146000	146000	146000	146000	146000	146000
6.	33691147	Ֆունգիցիդ՝ 5	լիտր	35	18000	630000	630000	630000	630000	630000	630000	630000	630000	630000
7.	24451200	Ֆունգիցիդ՝ 6	կգ	30	13000	390000	390000	390000	390000	390000	390000	390000	390000	390000
8.	24451200	Ֆունգիցիդ՝ 7	կգ	50	7000	350000	350000	350000	350000	350000	350000	350000	350000	350000
9.	24451200	Ֆունգիցիդ՝ 8	կգ	60	11000	660000	660000	660000	660000	660000	660000	660000	660000	660000
10.	33691147	Ֆունգիցիդ՝ 9	լիտր	8	59000	472000	472000	472000	472000	472000	472000	472000	472000	472000
11.	33691147	Ֆունգիցիդ 10	լիտր	8	14000	112000	112000	112000	112000	112000	112000	112000	112000	112000
12.	33691147	Ֆունգիցիդ 11	լիտր	1	75000	75000	75000	75000	75000	75000	75000	75000	75000	75000
13.	24451111	Ինսեկտիցիդ 1	լիտր	13	21000	273000	273000	273000	273000	273000	273000	273000	273000	273000
14.	24451111	Ինսեկտիցիդ 2	լիտր	10	15000	150000	150000	150000	150000	150000	150000	150000	150000	150000
15.	24451110	Ինսեկտիցիդ 3	կգ	5	102000	510000	510000	510000	510000	510000	510000	510000	510000	510000
16.	24451110	Ինսեկտիցիդ 4	կգ	5	99000	495000	495000	495000	495000	495000	495000	495000	495000	495000
17.	24451111	Ինսեկտիցիդ 5	լիտր	15	22000	330000	330000	330000	330000	330000	330000	330000	330000	330000
18.	24451111	Ինսեկտիցիդ 6	լիտր	4	10000	40000	40000	40000	40000	40000	40000	40000	40000	40000
19.	24451111	Ինսեկտիցիդ 7	լիտր	2	23000	46000	46000	46000	46000	46000	46000	46000	46000	46000
20.	24451111	Ինսեկտիցիդ 8	լիտր	4	24000	96000	96000	96000	96000	96000	96000	96000	96000	96000
		ԸՆԴԱՄԵՆԸ												**6327000**

Ծանոթություն. Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են ՀԱԱՀ հիմնադրամի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 25.12.2021թ.:

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247010053103
ՀՎՀՀ՝ 01507028
Ռեկտոր՝ _____ Վ. Ուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» ԱՁ
Գործ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 56-46
«ԱՅԴԻ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11813012607100
ՀՎՀՀ՝ 20179887
Տնօրեն՝ _____ Դ. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը
Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն